

Վարուժան կանգնած օտար երկրի վրայ, իր պանդուխտի կարօտով լի հոգին՝ հայ արինսագանգ հողին վրայ կը պատցնե՛ր՝ աղէտը երգելով: *Ջարդը, Կիլիկեան մոխիրներուն, Սով, Մարած օճախ, Առեանգիջ, Հովիւր* եւ ուրիշներ մեր ճակատագիրը չե՛ն: Տառապանքի եւ յոյսի այդ երգին մէջ Վարուժան Սիամանթօէն կը տարբերի յաճախ մանրամասնութեանց նկարումովը: Մինչ Սիամանթօ համադրուած եւ սեմպոլիք տողերուն մէջ ուրոյն պատկերներ կը ստեղծէ, Վարուժան կը նկարէ գիրք մը. մէկը մեր երեւակայութեանը կը խօսի իր ուրուային, տեսիլներու խումբերով, միւսը որոշ գծագրութիւնները կը յօրինէ մեր աչքին: Վարուժանի տողերը գրեթէ միշտ որոշ նիւթի մը էութիւնը կազմող մասերն են, մինչ Սիամանթօի տողերը երաժշտութեան մը տպաւորութիւնները կը բերեն, չէ թէ անոր ձայնական առումով, հապա այդ ձայներուն՝ մեր մէջ արթնցուցած պատկերներու շփոթ՝ այլ հոյակապ մեծութեամբ. երկուքն ալ գեղեցիկ են, այլ հոս Սիամանթօն կը շահի՛ ինձ համար:

Վարուժանի *Կիլիկիան մոխիրներուն* քերթուածէն՝

*Բոցը կ'անցնի, ու քամին գալով անոր ետեւէն
Խանձած սէգերը առած սարերէն վեր կը մրրկկէ:
Ո՛վ դողահար մերկութիւն խըլուրդներու խողերուն՝
Որոնք նըման ոգնիի արտերուն մէջ կ'յայտնուին,
Ո՛վ ւերակը բլրան վըրայ շինուած հիւղերուն.
Ուրկէ կ'ելլէր հայ գեղջուկն առաւօտեան աղօթքով
Արարչութիւնը հողին արթնցնելու բահին տակ:*

Նոյն ոտանաւորէն՝

*Կիսայրեացները անդին խաւարին մէջ կը հեծեն.
Բայց վիրաւոր մ'աւասիկ կը կոթողուի մութին մէջ,
Յետոյ ծունկի վըրայ ընդքարշ կը սօտենայ խոժանին,
Եւ հեգնօրէն, քրքջալիր արինտողիք կը թըքնէ
Խարոյկին մէջ տօնական:*